Քաղաքական կնատյացության դրսևորումները Հայաստանում նախընտրական շրջանում

Հակագենդերային նարատիվների, «գենդերային պատժի» և վերարտադրողական իրավունքների շուրջ մանիպուլյացիաների համապարփակ մշտադիտարկման զեկույց

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՆԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հակագենդերային նարատիվների, «գենդերային պատժի» և վերարտադրողական իրավունքների շուրջ մանիպուլյացիաների համապարփակ մշտադիտարկման զեկույց

2026 թ. մարտ–հունիս

Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ

Կանանց ռեսուրսային կենտրոն

Այս զեկույցը պատրաստվել է Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի (ԺԶՀ) աջակցությամբ՝ «Գործընկերություն հանուն ժողովրդավարության» ծրագրի շրջանակում: Զեկույցի բովանդակության համար պատասխանատվությունը կրում է «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ն, և պարտադիր չէ, որ արտացոլի ԺԶՀ-ի պաշտոնական դիրքորոշումը:

Բովանդակություն

Ներածություն 5
Տեսական և մեթոդաբանական շրջանակ 6
Նախընտրական շրջանի հակագենդերային նարատիվներ 9
Մեդիա-էկոհամակարգ և մանիպուլյատիվ հնարքներ 15
Հիբրիդային հարձակումներ 15
Ֆեմինիստների և ՔՀԿ-ների թիրախավորում 16
Վախի հրահրում և ժողովրդագրական «փոխարինման» նարատիվներ 18
Վերարտադրողական իրավունքներ և «Պրո-լայֆ» դիսկուրս 21
Քանակական տվյալների ամփոփում 25
Եզրակացություններ և առաջարկներ 26

Ներածություն

Սույն զեկույցը ներկայացնում է 2026 թվականի մարտից հունիսի 7-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի մեդիա տիրույթում և քաղաքական դիսկուրսում շրջանառվող հակագենդերային նարատիվների համապարփակ մշտադիտարկման արդյունքները: Ուսումնասիրության առանցքում նախընտրական շրջանն է, որտեղ գենդերային զգայուն թեմաները և կին քաղաքական գործիչների թիրախավորումը վերածվել են համակարգված ընտրական տեխնոլոգիայի՝ նպատակ ունենալով խարխլելու ժողովրդավարական արժեքները, ստեղծելու հանրային բևեռացում և նվազեցնելու կանանց սուբյեկտայնությունը հանրային որոշումների կայացման գործընթացում:

Մշտադիտարկվող փուլում արձանագրվել է քաղաքական կնատյացության դրսևորումների աննախադեպ աճ, որտեղ քննադատությունը բովանդակային կամ գաղափարական դաշտից նպատակաուղղված կերպով տեղափոխվել է անձնական վիրավորանքի, սեռականացված պիտակավորման և մայրության շահարկման տիրույթ: Զեկույցը մանրամասն վերլուծում է «գենդերային պատժի» մեխանիզմները, որոնց միջոցով քաղաքականապես ակտիվ կինը պիտակավորվում է որպես «ոչ առաքինի» կամ «վատ մայր»՝ նրան հանրային ոլորտից դեպի մասնավոր-կենցաղային տիրույթ մղելու նպատակով: Ուսումնասիրության մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում տղամարդու «ստորացման» նարատիվները և մեդիա էկոհամակարգում կիրառվող հիբրիդային հարձակումները, որոնք հաճախ սնվում են տրանսնացիոնալ, մասնավորապես՝ ամերիկյան ծայրահեղ պահպանողական (Alt-right) և ռուսական «ավանդական արժեքների» խոսույթներից:

Զեկույցի վերջնարդյունքը ոչ միայն առկա վիճակի արձանագրումն է, այլև ինստիտուցիոնալ և հանրային մակարդակներում այս վտանգավոր միտումներին հակազդելու գործնական առաջարկների ներկայացումը:

Տեսական և մեթոդաբանական շրջանակ

Սույն ուսումնասիրության տեսական հիմքը խարսխված է նախընտրական շրջանում քաղաքական կնատյացության և գենդերային ապատեղեկատվության՝ որպես ընտրական տեխնոլոգիայի կիրառման հայեցակարգի վրա: Տեսական այս շրջանակը թույլ է տալիս դիտարկել կին գործիչների թիրախավորումը ոչ թե որպես պատահականություն, այլ որպես համակարգված ռազմավարություն, որտեղ վարկաբեկումն իրականացվում է ոչ թե գաղափարական հարթության մեջ, այլ սեռականության, արտաքինի կամ անձնական կյանքի շահարկման միջոցով:

Վերլուծության մեջ առանցքային նշանակություն ունի Ռոզալինդ Հերսթհաուսի «առաքինության էթիկան»[1], որը վերարտադրողականության և մայրության հարցերը դիտարկում է ոչ թե լոկ իրավունքների կամ հետևանքների, այլ մարդկային «ծաղկող» կյանքի և առաքինի ու պատասխանատու վարքագծի տեսանկյունից: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս բացահայտելու, թե ինչպես է հանրային դիսկուրսում կնոջ քաղաքական սուբյեկտայնությունը պիտակավորվում որպես «առաքինի մոր» կերպարից շեղում, ինչը, ըստ էության, հոգեբանական և հուզական բռնության դրսևորում է:

Մեդիա վերլուծության համատեքստում կիրառվում է Գեյ Թաքմանի «սիմվոլիկ ոչնչացման» հայեցակարգը[2], որը բացատրում է, թե ինչպես է մեդիան անտեսում, բացառում կամ ծաղրի ենթարկում կանանց՝ նրանց քաղաքական ձեռքբերումները փոխարինելով սեքսուալիզացված կամ սատիրիկ պատկերներով: Սա համադրվում է Նենսի Ֆրեյզերի «հանրային և մասնավոր ոլորտների» բաժանման տեսության հետ[3], որը վերհանում է կնոջը բացառապես մասնավոր-կենցաղային տիրույթ մղելու և հանրային քաղաքականությունից դուրս մղելու դիսկուրսիվ փորձերը:

Լուչինա Դի Մեկոյի «գենդերային ապատեղեկատվության» մասին ուսումնասիրությունների[4] վրա հենվելով հնարավոր է դառնում քաղաքական

[1] Hursthouse, Rosalind, և Glen Pettigrove. «Virtue Ethics»: The Stanford Encyclopedia of Philosophy, խմբ. Edward N. Zalta և Uri Nodelman, Metaphysics Research Lab, Stanford University: Հասանելի է՝ https://plato.stanford.edu/archives/sum2026/entries/ethics-virtue/.

[2] Tuchman, Gaye. «The Symbolic Annihilation of Women by the Mass Media»: The Social Construction of Reality, 2000: Հասանելի է՝ https://www.researchgate.net/publication/314939780_The_Symbolic_Annihilation_of_Women_by_the_Mass_Media.

[3] Fraser, Nancy. «Rethinking the Public Sphere: A Contribution to the Critique of Actually Existing Democracy»: Social Text, № 25/26, 1990, էջ 56–80: Duke University Press: Հասանելի է՝ http://www.jstor.org/stable/466240.

[4] Di Meco, Lucina. Monetizing Misogyny: Gendered Disinformation and the Undermining of Women's Rights and Democracy Globally: #ShePersisted, փետրվար 2023: Հասանելի է՝ https://she-persisted.org/wp-content/uploads/2023/02/ShePersisted_MonetizingMisogyny.pdf.

կնատյացությունը դիտարկել որպես ժողովրդավարությանը սպառնացող հիբրիդային զենք, որի նպատակն է ոչ թե հերքել փաստարկները, այլ բարոյապես ոչնչացնել կին գործիչներին որպես հանրային դերակատարների:

Այս ամենը դիտարկվում է Կիմբեռլի Քրենշոուի հատվողականության՝ ինտերսեկցիոնալիզմի պրիզմայով[5], ինչը ցույց է տալիս, թե ինչպես են կանայք ենթարկվում կրկնակի ճնշման թե՛ որպես քաղաքական հակառակորդներ և թե՛ որպես սոցիալական նորմերից «շեղված» սուբյեկտներ:

Ուսումնասիրությունն իրականացվել է ***համապարփակ դիսկուրս-վերլուծության մեթոդով***[6], որը միտված է նախընտրական շրջանում շրջանառվող նարատիվների կառուցվածքի և մանիպուլյատիվ մեխանիզմների վերհանմանը: Տվյալների հավաքումն իրականացվել է նպատակային ընտրանքի սկզբունքով՝ ուսումնասիրելով այն քաղաքական դերակատարներին և մեդիա հարթակները (Facebook, TikTok, Telegram, առցանց լրատվամիջոցներ), որոնք ունեն հակագենդերային օրակարգ գեներացնելու բարձր ներուժ: Որպես տեխնիկական գործիքակազմ կիրառվել են բանալի բառերի մատրիցան և թվային արխիվացումը:

Վերլուծական շրջանակը ներառում է քանակական բովանդակային վերլուծություն՝ ըստ թեմատիկ կլաստերների, և որակական դիսկուրս-վերլուծություն՝ ուղղված լեզվական հնարքների (պիտակավորում, դեմոնիզացիա) և տրանսնացիոնալ կապերի նույնականացմանը: Ուսումնասիրությունը կիրառել է նաև «արձագանքի չափման» մեթոդը, ինչը հնարավորություն է տվել տարբերակելու արհեստականորեն ուռճացված աղմուկը օրգանիկ հանրային արձագանքից:

Ինչպես ցանկացած համապարփակ մշտադիտարկում, սույն հետազոտությունը ևս ունի որոշակի սահմանափակումներ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել արդյունքների մեկնաբանման ժամանակ: Հետազոտությունը սահմանափակված է բացառապես նախընտրական փուլի կարճ ժամանակահատվածով: Հետևաբար այն չի հավակնում ներկայացնելու հակագենդերային դիսկուրսի դինամիկան այս ժամկետներից դուրս կամ ավելի երկարաժամկետ կտրվածքով:

Քանի որ կիրառվել է նպատակային ընտրանքի մեթոդը, մշտադիտարկման կենտրոնում եղել են այն հարթակներն ու դերակատարները, որոնք ունեն հակագենդերային օրակարգ գեներացնելու բարձր պոտենցիալ: Սա նշանակում է, որ քաղաքական դաշտի

[5] Crenshaw, Kimberlé. «Mapping the Margins: Intersectionality, Identity Politics, and Violence against Women of Color»: Stanford Law Review, h. 43, № 6, 1991, էջ 1241–1299: Հասանելի է՝ https://doi.org/10.2307/1229039.

[6] O'Keeffe, Anne. «Media and Discourse Analysis»: The Routledge Handbook of Discourse Analysis, խմբ. James Paul Gee և Michael Handford, 1-ին հրատարակություն, Routledge, 2012, էջ 441–454:

այն հատվածները, որոնք չեն դրսևորել նման ակտիվություն, դուրս են մնացել վերլուծության հիմնական շրջանակից: Հետազոտության ընթացքում չեն դիտարկվել բոլոր կին քաղաքական գործիչների անհատական սոցիալական էջերը: Վերլուծությունը կենտրոնացել է առավել թիրախային և հանրային աղմուկ առաջացրած դեպքերի վրա:

Թեև հետազոտությունը կիրառել է «արձագանքի չափման» մեթոդը, միշտ չէ, որ հնարավոր է 100% ճշգրտությամբ տարբերակել կազմակերպված բոթ-ցանցերի գործողությունները ծայրահեղ բևեռացված իրական օգտատերերի օրգանիկ վարքագծից: Ուստի այդ մասով գնահատականները ներկայացված են ընդհանուր՝ հիմնված ենթադրյալ վարքագծային օրինաչափությունների վրա:

Որոնումն իրականացվել է նախապես մշակված բանալի բառերի մատրիցայի հիման վրա (հայերեն): Հնարավոր է, որ որոշակի մանիպուլյատիվ նյութեր, որոնք չեն պարունակել տվյալ եզրույթները, դուրս մնացած լինեն ավտոմատացված որոնման դաշտից:

Նախընտրական շրջանի հակագենդերային նարատիվներ

Նախընտրական շրջանի հակագենդերային նարատիվների համատեքստում «գենդերային պատիժը» հանդես է գալիս որպես կին քաղաքական գործիչների սուբյեկտայնությունը ճնշելու և նրանց հանրային ոլորտից դուրս մղելու առաջնային մեխանիզմ: Մշտադիտարկվող ժամանակահատվածում այս երևույթն առավել ցայտուն դրսևորվեց «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ Գոհար Ղումաշյանի ձերբակալության[7] շուրջ ծավալված դիսկուրսում: Ղումաշյանի՝ երկու ամսական երեխայի մայր լինելու հանգամանքը իշխանական թևի աջակիցների և «ֆեյքային» օգտատերերի կողմից օգտագործվեց ոչ թե որպես մարդասիրական գործոն, այլ որպես նրան բարոյապես վարկաբեկելու և «պատժելու» հիմք: Շրջանառվող հիմնական թեզերն էին՝ «նամուսով մայրը երեխուն չի շպրտի ու ընկնի քուչեքը» և «երկու ամսական երեխայի մայրը վեր է ընկնում տանը, այլ ոչ թե թրև գալիս միտինգների մեջ», ինչն ուղղակիորեն վերահաստատում է կնոջը բացառապես մասնավոր-կենցաղային տիրույթում տեսնելու պատրիարխալ պահանջը:

Այս գործընթացում ինստիտուցիոնալացված «գենդերային պատժի» դրսևորում դարձավ իշխանական պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանի արտահայտությունը՝ «անկախ կրծքերի զբաղվածությունից», որը տարբեր ձևակերպումներով կրկնվեց հանրային հարցազրույցների ժամանակ:[8][9] Ձևակերպումը, որը կոչված էր շեշտելու օրենքի առջև հավասարությունը, իրականում սեքսուալիզացրեց կրծքով կերակրման բնական ֆունկցիան և նվաստացրեց կնոջ արժանապատվությունը՝ մայրությունը ներկայացնելով որպես քաղաքական շահարկման կամ «ինդուլգենցիայի» առարկա: Իրավապաշտպան կազմակերպությունները[10] [11] սա

[7] Ասլանյան, Կարլեն. «Գոհար Ղումաշյանը բերման է ենթարկվել. ըստ փաստաբանի՝ ձերբակալված է»: Ազատություն, 14 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.azatutyun.am/a/berman-e-entarkvel-ouzhegh-hayastan-i-andam-gohar-ghoumashyany/33732074.html.

[8] Կիրակոսյան, Նարեկ. «Անկախ մարդու կրծքերի զբաղվածությունից, չեն կարող անել արգելված արարք և պատասխան չտալ. Ջուլհակյան»: YouTube, 17 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=XKSHzXWrFr4.

[9] Սարիբեկյան, Գայանե. «ՔՊ-ականներ Սարիկ Մինասյանի և Արուսյակ Ջուլհակյանի հայտարարությունները՝ քննարկման առարկաներ»: Ազատություն, 20 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.azatutyun.am/a/kp-akanner-sarik-minasyani-ev-arousyak-joulhakyani-haytararoutyounnery-knnarkman-ararkaner/33736452.html.

[10] «Կանանց Կենտրոն. Շուշի» ՀԿ. «Հայտարարություն»: Facebook, 21 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.facebook.com/womenscenter.shushi/photos/հայտարարությունաժ-պատգամավոր-պետական-իրավական-հարցերի-մշտական-հանձնաժողովի-նախագ/1235799645412029/.

[11] «Կետ 33» հասարակական կազմակերպություն. «Հայտարարություն Գոհար Ղումաշյանի դեպքի վերաբերյալ»: 18 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://point33.am/gohar-ghumashyan/.

որակեցին որպես պատգամավորական էթիկայի կոպտագույն խախտում, որը նպաստում է կրծքով կերակրող մայրերի «ամոթին» և ստեղծում վտանգավոր նախադեպ կին գործիչների կենսաբանական առանձնահատկությունները թիրախավորելու համար:

Նախընտրական շրջանի հակագենդերային նարատիվներում տղամարդու «ստորացման» օրինաչափությունը հանդես է գալիս որպես քաղաքական հակառակորդին արժեզրկելու մեկ այլ գործիք, որը հիմնված է տղամարդկայնության ավանդական պատկերացումների շահարկման վրա: Այս պատեռնը դրսևորվում է մի քանի հիմնական ուղղություններով, որտեղ տղամարդու արժանապատվությունը կասկածի տակ է դրվում կանանց հետ նրա հարաբերությունների կամ կանանց քաղաքական գործունեության համատեքստում:

Այս օրինաչափության առաջին և ամենատարածված դրսևորումը կանանց որպես «վահան» կամ «փուռը տրվող» սուբյեկտներ ներկայացնելն է:[12]

Ընդդիմադիր կանանց, մասնավորապես Գոհար Ղումաշյանի ձերբակալության համատեքստում շրջանառվում էր այն թեզը, որ տղամարդիկ «փուռն են տալիս» կանանց իրենց քաղաքական շահերի համար:[13] Հանրային մեկնաբանություններում հաճախ հանդիպում էր այն միտքը, որ քաղաքական ուժերն այնքան «թույլ» են, որ օգտագործում են կերակրող մորն իրենց դիվիդենտների համար, ինչը դիտարկվում է որպես տղամարդկային «թասիբի» բացակայություն: [14] [15]

Այս նարատիվը նպատակաուղղված կերպով շահարկում է տղամարդու վերաբերյալ հանրային խորքային սպասումները և սոցիալական նորմերը, ըստ որոնց՝ «իսկական» տղամարդը պետք է հանդես գա որպես կնոջ պաշտպան և քաջություն ունենա պատասխանատվություն ստանձնելու սեփական արարքների համար: Ակնարկելով, որ տղամարդ գործիչները չունեն բավարար արիություն իրավապահների առջև կանգնելու և «թաքնվում են կանանց հետևում» կամ նրանց օգտագործում որպես քաղաքական «վահան»՝ նարատիվը

[12] «Հայկական ժամանակ». «Խմել եք այն հլու-հնազանդ կանանց կենացը, ում հետևում պատրաստ եք թաքնվել վտանգի դեպքում. Պարսիլյան»: Facebook, 16 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.facebook.com/watch/?v=1609982650119948.

[13] «Հանրային հեռուստաընկերություն». «Ընդդիմությունը ջիհադիստների պես առաջնագիծ է ուղարկում կանանց | Աննա Դանիելյանի հարցազրույցը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ Վոլոդյա Հակոբյանի հետ»: Facebook, 17 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.facebook.com/reel/1603167870772236/?s=single_unit.

[14] Ջուլիակյան, Արուսյակ. «Այ սա է կալուգացի օլիգարխի փոքրիկ խմբակի իրական կերպարը: Ապօրինությունների դրդել երիտասարդ կանանց և թաքնվել նրանց մեջքի հետևում: Իսկը Նիժնի Տապլոռի բարքեր»: Facebook, 14 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.facebook.com/photo/?fbid=10240105338958491&set=a.10200225069936690.

[15] Makaryan News. «Ես ոչ մի անգամ չեմ թաքնվել ուրիշ մարդկանց հետևում, առավել ևս կանանց հետևում. Սամվել Կարապետյանի ելույթը դատարանում»: Facebook, 17 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.facebook.com/reel/924921783693360.

փորձում է բարոյապես կազմալուծել հակառակորդին՝ նրա վարքագիծը ներկայացնելով որպես տղամարդկային «թասիբի» բացակայություն և շեղում հայ տղամարդու «ավանդական» կերպարից:

Երկրորդ ուղղությունը վերաբերում է իշխանության ներկայացուցիչների տղամարդկայնության ժխտմանը՝ կանանց նկատմամբ նրանց վարքագծի պրիզմայով: Համբիկ Սասունյանի[16] և այլոց ելույթներում հնչում էր այն միտքը, որ «հայ տղամարդը կանանց առջև խոնարհվում է, հարգում է», մինչդեռ իշխանավորները, գոռալով կանանց վրա կամ ուժ կիրառելով նրանց նկատմամբ, դադարում են տղամարդ կոչվելուց: Օգտագործվում են նման որակումներ՝ «տղամարդ կոչեցյալներ»,[17] կամ պնդումներ, որ նրանց մեջ «մի հատ տղամարդ չկա, մի հատ թասիբ ունեցող մեկը չկա»: Սա ստեղծում է մի պատկեր, որտեղ քաղաքական իշխանությունը զուրկ է «իսկական տղամարդկային» որակներից, քանի որ թիրախավորում է «խեղճ ու կրակ»[18] կանանց:

Երրորդ կարևոր շերտը տղամարդու կախվածությունն է կնոջից, ինչը ներկայացվում է որպես ստորացուցիչ «փալասի»[19] կարգավիճակ: Խաչիկ Մանուկյանի ձևակերպմամբ՝ վարչապետն առանց իր տիկնոջ՝ Աննա Հակոբյանի, «միանգամից փալաս է դառնում»: Այս համատեքստում տղամարդը պատկերվում է որպես սուբյեկտայնությունից զուրկ անձնավորություն, որը «փռվել է հայ ժողովրդի ոտքերի տակ» կամ զուրկ է արժանապատիվ կեցվածքից: Տղամարդու այսօրինակ նսեմացումը հաճախ ուղեկցվում է նաև ընտանիքը «շնորհքով պահելու» կամ երեխաներին «տղամարդավարի» դաստիարակելու նրա անկարողության մասին քննադատությամբ[20]:

Վերջապես, այս պատեռնը դրսևորվում է նաև վերարտադրողական պատասխանատվության տիրույթում, որտեղ հակաաբորտային դիսկուրսը փորձում է հղիության ընդհատման հարցը տեղափոխել տղամարդկային արժանապատվության և սոցիալական սպասումների դաշտ: Թեև անցանկալի հղիության և աբորտի ամբողջ ֆիզիկական և առողջապահական ծանրությունը բացառապես կրում է կինը, այս նարատիվը շեշտադրումը նպատակաուղղված կերպով տեղափոխում է տղամարդու բարոյական նկարագրի վրա՝ նպատակ ունենալով նրան «պատժելու»

[16] ՀԱՅԵԼԻ. «#ՀԻՄԱ. Ես չեմ ուզում քֆուր տալ, բայց իմացե՛ք՝ փախուստ չեք ունենալու. Համբիկ Սասունյան»: YouTube, 1 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=4o0ovUS5mHE.

[17] ՀԱՅԵԼԻ. ««Նիկո՛լ, չափալախդ ստացել ես, հիմա ո՞ւմ վրա ես հիստերիկանում». Տիգրան Չոբանյան»: YouTube, 18 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=xKoK-dFF_HM.

[18] ՀԱՅԵԼԻ. «ԱԺ-ում երեկ Նիկոլն իրեն կորցրել է. «համբալաշոուներն» արդեն պայթում են. պահեստազորի գնդապետ»: YouTube, 16 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=7wtuCP855D8.

[19] ՀԱՅԵԼԻ. «Նիկոլ... լափելուց հետո՝ զուգարան. Խաչիկ Մանուկյան»: YouTube, 22 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=CSfCWklK4jk.

[20] ՀԱՅԵԼԻ. «#ՀԻՄԱ. Ես չեմ ուզում քֆուր տալ, բայց իմացե՛ք՝ փախուստ չեք ունենալու. Համբիկ Սասունյան»: YouTube, 1 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=4o0ovUS5mHE.

սոցիալական նորմերից շեղվելու կամ այդ շեղումը «թույլ տալու» համար:

Այսպիսով՝ տղամարդու «ստորացման» պատեռնը հակագենդերային դիսկուրսում ծառայում է որպես քաղաքական հակառակորդին բարոյապես կազմալուծելու միջոց՝ նրան ներկայացնելով որպես կանանցից կախյալ կամ տղամարդկային «թասիբից» զուրկ էակ:

Մշտադիտարկման արդյունքները փաստում են, որ կին գործիչների պիտակավորումը քաղաքական կնատյացության ամենատարածված գործիքն է, որտեղ հանրային քննադատությունը գաղափարական դաշտից նպատակաուղղված կերպով տեղափոխվում է անձնական վիրավորանքի, սեռականացված ենթատեքստերի և կենսաբանական նվաստացման տիրույթ:

Քաղաքական և սեռականացված պիտակավորման թիրախում առավել հաճախ հայտնվում է վարչապետի տիկին Աննա Հակոբյանը, որի նկատմամբ կիրառվում են նման որակումներ՝ «քաղաքական պուտանկա»[21], «գիշերային թիթեռնիկ», «նախկին հարճ»[22] և «ոչնչություն»: Նրան բնորոշում են նաև որպես «փնթի էգ»[23], ինչը միաժամանակ թիրախավորում է կնոջ արտաքինն ու կենսաբանական սեռը՝ նպատակ ունենալով նվաստացնելու նրա հանրային կերպարը:

Նման սեռականացված հարձակման ենթարկվեց նաև պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանը, որին «կրծքերի զբաղվածության» մասին հայտարարությունից հետո պիտակավորեցին «պոռնիկ», «թուրքի լամուկ», «լկտի», «անբարոյական» և «ճիվաղ»:[24]

Պիտակավորման մյուս առանցքային ուղղությունը դեմոնիզացիան և դեհումանիզացիան է, որի միջոցով կին գործիչներին վերագրվում են անբնական կամ չար ուժերի հատկանիշեր: Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը պարբերաբար բնութագրվում է որպես «սատանայի վհուկ», «դրածո»[25], «նիկոլի իրավունքների պաշտպան» կամ պարզապես «աղջնակ»՝ նսեմացնելու

[21] ՀԱՅԵԼԻ. ««Այ քաղաքական պու*անկա, դե գնա գլուխդ խոթիր մտիր էնտեղ, որտեղից դուրս ես եկել». Խաչիկ Մանուկյան»: YouTube, 31 մարտի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=VDRP5mUq9PM.

[22] ՀԱՅԵԼԻ. «ԱԺ-ում երեկ Նիկոլն իրեն կորցրել է. «համբալաշոուներն» արդեն պայթում են. պահեստազորի գնդապետ»: YouTube, 16 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=7wtuCP855D8.

[23] ՀԱՅԵԼԻ. ««Հազիվ մոռացել էինք փնթի էգին...». ինչո՞ւ նորից հայտնվեց Աննա Հակոբյանը. Ադիբեկյան»: YouTube, 20 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=S_p1ognph_4.

[24] Քրիստինե Վարդանյանի 2026 թ. ապրիլի 17-ի Facebook գրառման ներքո հրապարակված մեկնաբանություններ: Facebook, 17 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.facebook.com/vkristinne/posts/pfbid0dns79gF4Dby58FePQ5hHZxhY4Vp4S9535ntXzHb9mfF3EcsuY5c6QnYSi9zpwzwl:

[25] ՀԱՅԵԼԻ. «Գյումրու խայտառակությունից հետո ինչ են որոշել Նիկոլն ու Աննան. Նարինե Դիլբարյան»: YouTube, 23 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=R4tTGocKg_o.

նրա մասնագիտական կարողությունները:

ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը ևս թիրախավորվել է որպես «սարսափելի հեքիաթների միջի վիուկ»[26], իսկ քաղաքացիական հասարակության կին ներկայացուցիչները պիտակավորվում են[27] որպես «սորոսականներ», «գրանտի լափակերներ», «կեղտոտ ինֆուզորիա» և «զիբիլ»:

Այս գործընթացում առանձնահատուկ տեղ ունի «գենդերային պատիժը», որտեղ կանայք պիտակավորվում են որպես «վատ մայրեր» կամ ընտանեկան արժեքները դավաճանած սուբյեկտներ: Մշտադիտարկվող ժամանակահատվածում այս երևույթը դրսևորվեց նաև «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ Հասմիկ Ամիրզադյանի ձերբակալության [28]շուրջ ծավալված դիսկուրսում: Հինգ անչափահաս երեխաների խնամքով զբաղվող կնոջ թիրախավորումը սոցիալական ցանցերում ստացավ անձնական-բարոյական բնույթ: Հանրային մեկնաբանություններում Ամիրզադյանը պիտակավորվեց որպես «փողոցային կաշառք բաժանող խուլիգանկա», իսկ նրա մայրական իրավունքները դրվեցին կասկածի տակ՝ կոչ անելով պետությանը միջամտելու նրա ընտանեկան կյանքին, այնպես, ինչպես Գոհար Ղումաշյանի դեպքում. «Երեխաներին էլ վերցրե՛ք ձեռքից, մայրը հանցագործ է, դրա դաստիարակած երեխան ի՞նչ պիտի լինի»:[29]

Մանիպուլյատիվ և սատիրիկ պիտակավորումը հատկապես ակտիվ է «Դեղին մամուլի»[30] հրապարակումներում, որտեղ կիրառվում են հեգնական պիտակներ կին գործիչների քաղաքական կշիռը նվազեցնելու համար: Գայանե Աբրահամյանը[31] և Հասմիկ Համբարձումյանը[32] ներկայացվում են որպես «թռած խոսնակներ», իսկ

---

[26] ՀԱՅԵԼԻ. «Պետրոսի կնոջ ասածը. այդպիսի բան կարող է ասել միայն «սատանայի վիուկը». Պարույր Հայրիկյան»: YouTube, 1 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=ipeqlXfWLfw.

[27] ՀԱՅԵԼԻ. «Նիկոլն ու Մուստաֆան ինչ «կկերցնեն» հայ ժողովրդին. հոգեբան Կարինե Նալչաջյան»: YouTube, 29 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=gKLJ5ZdHWtk.

[28] NEWS.am. ««Ուժեղ Հայաստանի» անդամ Հասմիկ Ամիրզադյանը, ում մեղադրանք է առաջադրվել, 5 որդեգրած երեխա ունի. փաստաբան»: 16 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://news.am/hy/news/943853.

[29] hovhannisyan_k. «Ֆեմինիստներ զարթնե՛ք: Կին քաղաքական գործիչ են ձերբակալել (2 ամսական երեխայի մայր): Դե բա արձագանքեք, թե՞ ձեռք չի տալիս քաղաքականությունից խոսելը»: Threads, 14 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.threads.com/@__hovhannisyan_k__/post/DXHvpy0CAU_/ֆեմինիստներ-զարթնեքկին-քաղաքական-գործիչ-են-ձերբակալել2-ամսական-երեխայի-մայրդե-բա

[30] «Դեղին մամուլ»: Facebook էջ: Հասանելի է՝ https://www.facebook.com/profile.php?id=61553480897278.

[31] «Դեղին մամուլ». «Դեղին մամուլի թղթակից Հասմիկ Համբարձումյանը էկսկլյուզիվ հարցազրույց է արել ՔՊ նախկին պատգամավոր, ժողովրդավարության գիտակ Գայանե Աբրահմյանի հետ»: Facebook, 16 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.facebook.com/photo/?fbid=1222516979781160 29&set=a.122115723680116029.

[32] «Դեղին մամուլ». «... Հասմիկ Համբարձումյանը list.am-ում հայտարարություն է տարածել, որ փնտրում է Ադրբեջանի հետ կապված կեղծ լուր, որ հերքի»: Facebook, 26 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.facebook.com/photo/?fbid=1222528351641160 29&set=a.122115723680116029.

Աբրահամյանին հեգնանքով անվանում են «տիեզերագնաց դառնալ երազող», որն անընդհատ «թռնում է» անհարմար հարցերից:

Այս բոլոր դրսևորումները փաստում են, որ կին գործիչների պիտակավորումն ունի համակարգված բնույթ և օգտագործվում է որպես հիբրիդային զենք՝ կնոջը քաղաքականությունից դուրս մղելու և նրա հանրային սուբյեկտայնությունը բարոյապես ոչնչացնելու նպատակով:

Մեդիա-էկոհամակարգ և մանիպուլյատիվ հնարքներ

Հիբրիդային հարձակումներ

Մշտադիտարկման ընթացքում բացահայտված հիբրիդային հարձակումների առանցքային գործիքներից է սատիրիկ հարթակների (մասնավորապես՝ «Դեղին մամուլի») կողմից իրականացվող դիսկուրսիվ դեհումանիզացիան: Այս հարթակները կիրառում են սատիրայի և աբսուրդի մեթոդը՝ կին քաղաքական գործիչների սուբյեկտայնությունը նսեմացնելու և նրանց մասնագիտական գործունեությունը բացառապես սեռականացված կամ ծաղրական համատեքստում ներկայացնելու համար: Սա լիովին համապատասխանում է տեսական շրջանակում քննարկված «սիմվոլիկ ոչնչացման» հայեցակարգին, որտեղ քաղաքական լուրջ դիսկուրսը նպատակաուղղված կերպով փոխարինվում է աբսուրդային հորինվածքներով:

Արձանագրված առավել ցայտուն օրինակներից է պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանի շուրջ ծավալված արշավը, որտեղ նրա իրական հայտարարությունները փոխակերպվել են այնպիսի հորինված նարատիվների, ինչպիսիք են «կրծկալների կալանավորումը»[33] կամ Երևանից Գյումրի կազմակերպված «կրծքերթը»[34]:

«Կանանց ռեսուրսային կենտրոնի» ղեկավար Լարա Ահարոնյանին վերագրվել են ձևակերպումներ, թե իբր նա պաշտպանում է Ջուլհակյանին՝ պնդելով. «Կրծքի գործունեությունը չի արդարացնում հանցանքը... իմ կուրծքն արդեն 8 տարի է՝ զբաղված է հանցավոր անգործությամբ»:[35] Այս հնարքի նպատակն է ոչ միայն ծաղրի ենթարկել կոնկրետ պատգամավորին, այլև վարկաբեկել կին իրավապաշտպաններին և ֆեմինիստական շարժումը՝ այն ներկայացնելով որպես քաղաքականապես կողմնակալ և ընդդիմադիր կանանց անտեսող[36]:

[33] «Դեղին մամուլ». «Ապրիլի 69-ին կալանավորել են ՔՊ պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանի կրծկալները, հանցավոր անգործության մեղադրանքով»: Facebook, 18 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.facebook.com/photo/?fbid=122251953404116029&set=a.122127425840116029.

[34] «Դեղին մամուլ». «Ապրիլի 69-ին Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունը կրծքերթ է կազմակերպել Երևանից Գյումրի՝ ի պատիվ Արուսյակ Ջուլհակյանի կրծքերի գործունեության»: Facebook, 19 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.facebook.com/photo/?fbid=122252053448116029&set=a.122127425840116029.

[35] «Դեղին մամուլ». «ՔՊ-ի կանանց ռեսուրսային կենտրոնի ղեկավար Լարա Ահարոնյանը պաշտպանել է պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանին»: Facebook, 18 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.facebook.com/photo/?fbid=122251956710116029&set=a.122115723680116029.

[36] «Դեղին մամուլ». «Այս պահին իրավապահները, հատուկ հետախույզները փնտրում են Լարա Ահարոնյանին, որպեսզի նա պաշտպանի կին լրագրողներին»: Facebook, 2 մայիսի 2026 թ.:

Այս հարթակները հատուկ թիրախավորում են նաև փաստերի ստուգման հարթակները (օրինակ՝ FIP.am)՝ տարածելով կեղծ լուրեր, թե իբր լրագրողները փնտրում են Ադրբեջանին առնչվող կեղծ տեղեկություններ՝ դրանք հերքելու և ագրեսիան քողարկելու համար:

Սատիրիկ այս ֆոնին շրջանառության մեջ են դրվում նաև վախի հրահրմանն ուղղված նարատիվներ, որոնք շահարկում են հանրության զգայուն նյարդերը՝ կապված Արցախի հանձնման, Ցեղասպանության հուշահամալիրի հնարավոր քանդման կամ «300,000 ադրբեջանցիների» Հայաստան բերելու թեզերի հետ:[37] Այս հորինված լուրերը հաճախ շաղկապվում են կին գործիչների կերպարների հետ՝ նրանց ներկայացնելով որպես այս գործընթացների մեղսակիցների կամ ազգային շահերին դավաճանող սուբյեկտների: Այս շղթայից դուրս չեն մնացել նաև կին իրավապաշտպանները, որոնք ներկայացվում են որպես այս «հայրենադավ» ծրագրերը գաղափարական շղարշով քողարկողներ:

Այսպիսով՝ սատիրիկ հարթակները վերածվել են քաղաքական և գենդերային ապատեղեկատվության տարածման առանցքային գործիքի: Թեև սատիրան, որպես այդպիսին, քաղաքական քննադատության լեգիտիմ և ընդունելի միջոց է, սակայն մշտադիտարկվող հարթակների գործունեությունը դուրս է այդ շրջանակներից: Այստեղ կիրառվում է «մանիպուլյատիվ սատիրան», որը ոչ թե բովանդակային քննադատություն է, այլ նպատակաուղղված զրպարտություն և ատելության գեներացում: Իրական փաստերը խառնելով աբսուրդային և հաճախ սեռականացված հորինվածքների հետ՝ այս հարթակներն իրականացնում են կին գործիչների դիսկուրսիվ ապամարդկայնացում: Սա ոչ թե զուտ հեգնանք է, այլ հստակ մշակված տեխնոլոգիա, որն ուղղված է կին գործիչների նկատմամբ անվստահության կայուն միջավայրի ստեղծմանը:

Ֆեմինիստների և ՔՀԿ-ների թիրախավորում

Մշտադիտարկվող ժամանակահատվածում կին իրավապաշտպանների, ֆեմինիստական շարժումների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների թիրախավորումը երբեմն ունեցել է համակարգված բնույթ՝ տեղավորվելով համաշխարհային հակագենդերային շարժումներին բնորոշ «ներքին թշնամու» կերպարի ստեղծման տրամաբանության մեջ:

Այս գործընթացում առանցքային է «երկակի ստանդարտների»

Հասանելի է՝ https://www.facebook.com/profile/61553480897278/search/?q=Լարա.

[37] Մանասյան, Նանե. ««300 000 ադրբեջանցին» ընդդեմ «ուկրաինական ճակատ զորակոչվող 300 000 հայ տղամարդու». դավադրապաշտական թեզերի պատերազմը»: FIP – Փաստերի ստուգման հարթակ, 11 մայիսի 2026 թ.: Հասանելի է՝ https://fip.am/48537.

մեղադրանքը, որը հատկապես սրվեց ընդդիմադիր գործիչ Գոհար Ղումաշյանի ձերբակալությունից հետո: Թե՛ քաղաքական գործիչները, թե՛ սոցիալական ցանցերի օգտատերերը հանդես էին գալիս ընդհանրական հռետորաբանությամբ՝ հարցադրում անելով՝ «Ո՞ւր են ֆեմինիստները»[38], «ինչո՞ւ չեն արձագանքում», կամ պնդելով, որ իրավապաշտպանները «զարթնում են» միայն այն ժամանակ, երբ խախտվում են իշխանամետ կանանց իրավունքները:[39] Այս հարցադրումը մանիպուլյատիվ է. ֆեմինիստներն ու կանանց կազմակերպությունները հիշատակվում են ոչ թե որպես կոնկրետ սուբյեկտներ, այլ որպես միատարր, անդեմ մի խումբ, ինչը հնարավորություն է տալիս նրանց մեղադրելու անգործության համար՝ անկախ իրական ձեռնարկված քայլերից:

Այս նարատիվն ուժեղացվում է կազմակերպություններին որպես «իշխանական» կամ «դրսի գործակալներ» ներկայացնելու թեզերով: Մասնավորապես շրջանառվում են պնդումներ, որ իրավապաշտպան կառույցները, այդ թվում՝ կանանց կազմակերպությունները, իրականում հրահանգներ են ստանում դեսպանատներից և գործում են բացառապես միջազգային կազմակերպությունների թելադրանքով: Նմանատիպ խոսույթը, որը հաճախ հնչում է հանրային հարցազրույցներում (օրինակ՝ Սիվիլնեթի հարթակում[40]), նպատակ ունի վարկաբեկելու քաղաքացիական հասարակությանը՝ այն ներկայացնելով որպես ազգային շահերին հակասող և օտարերկրյա օրակարգեր սպասարկող:

Թիրախավորումն այս փուլում ձեռք է բերել նաև անձնավորված և կազմակերպված կեղծարարության բնույթ, ինչի առավել ցայտուն օրինակը «Փինք» կազմակերպության դեմ արշավն է: Կազմակերպության ներկայացուցիչ Լիլիթ Ավետիսյանի անունից ուղարկվել են կեղծ նամակներ[41], իսկ X հարթակում բացվել

[38] Karevor News. «Թիրախ դարձան հենց կանայք. Այդպես էլ՝ ի հայտ չեկան երբեմնի ֆեմինիստները, կանանց իրավունքների պաշտպանները. Գոհար Մելոյան»: Facebook, 16 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.facebook.com/karevornews/posts/pfbid02ZbyLWeDcqGdTtkGAMTugtADy65ZNUZL6uQTY8mWv7CSyaqpj9v2fNiUg7gnrPVj5l.

[39] Ղանդիլյան, Վարազդատ. «Իշխանական քարոզչությունը, ագրեսիվ խորհրդարանական ընդդիմության ատելության քարոզը, Դոգը, Perfect TV-ները, սուտի հոգեբան բլոգերները, չակերտավոր ֆեմինիստները, Եվրոպայի ազատությունների մասին ունեցած սխալ պատկերացումները, տգիտությունը, ռաբիզությունը անում են իրենց գործը...»: Facebook, 4 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.facebook.com/varazdat.ghandilyan/posts/pfbid02qGi6q3NHo61LhVJU64CkubDQjs7QrCAurnAtxxDemoxyJbmGxYCvbWuCKLiBNi3Al.

[40] Կանանց ՀԿ-ներ. «Կանանց ՔՀԿ-ների միացյալ հայտարարություն՝ կանանց կազմակերպություններին վարկաբեկող և թշնամական դիսկուրսի վերաբերյալ»: Facebook, 21 մայիսի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.facebook.com/share/p/1EaXFuEqDs/.

[41] Pink Armenia. «⚠️ Զգուշացում. Տեղեկացնում ենք, որ գոյություն ունի կեղծ էլեկտրոնային հասցե՝ lilit@pinkarmenia.com անվանումով, ով կապ է հաստատում մարդկանց հետ՝ ներկայանալով Փինք-ի աշխատակից»: Facebook, 12 մայիսի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.facebook.com/pinkarmenia/posts/pfbid02AV7XwJywrERB8p3Uy5V6fE8SofYSKreCFKtrPgDDfnj8ao22yVkPWPcLFB7ZRkNRl.

է կազմակերպությանը նմանակող օգտահաշիվ[42]:

ՔՀԿ-ների դեմ հաջորդ ծայրահեղ նարատիվը նրանց ներկայացումն է որպես «ազգի ցեղասպանություն» իրականացնող գործիքների: Արձանագրվել են պնդումներ, որ միջազգային և տեղական իրավապաշտպան կազմակերպությունները Հայաստան են մտել ոչ թե բարեփոխումների, այլ ժողովրդի նկատմամբ ցեղասպանություն իրականացնելու նպատակով, իսկ նրանց գործունեությունը որակվում է որպես բացարձակ «ֆիկցիա»[43]: Այս դիսկուրսում ՔՀԿ-ները նույնականացվում են «դրսի գործակալների», «սորոսականների» և «գրանտակերների» հետ, որոնք իբր սպասարկում են օրակարգեր՝ ուղղված ավանդական ընտանիքի քայքայմանը: Ռոբերտ Քոչարյանի հնչեցրած «ՀԿ-ների աուդիտի»[44] և դրանց ֆինանսավորման աղբյուրների «զտման» թեզը ևս ամրապնդում է այն պատկերը, թե քաղաքացիական հասարակությունը կասկածելի և վտանգավոր ներխուժում է հանրային կյանք:

Ուշագրավ օրինաչափություն է նաև այն, որ նույնիսկ երբ կանանց կազմակերպությունները հանդես են գալիս հստակ դիրքորոշմամբ կամ դատապարտող հայտարարությամբ, հանրային դիսկուրսում հաջողվում է ստեղծել «կիսատի» կամ անբավարարության տպավորություն: Օրինակ՝ Արուսյակ Ջուլհակյանի սեքսիստական արտահայտությանը Point 33-ի կամ «Շուշիի կանանց կենտրոնի» արձագանքները հաճախ ներկայացվում են որպես «խղճուկ» կամ ոչ համաչափ կամ էլ ուղղակի անտեսվում են ընդհանուր աղմուկի մեջ: Սա թույլ է տալիս պահպանել այն կայուն նարատիվը, թե ֆեմինիստական օրակարգը Հայաստանում կեղծ է և ունի ընտրովի բնույթ:

Այսպիսով՝ ֆեմինիստների և ՔՀԿ-ների թիրախավորումը ծառայում է որպես քաղաքական զենք, որը, մի կողմից, վարկաբեկում է կանանց իրավունքների պաշտպանության գաղափարը, մյուս կողմից՝ հասարակական սեկտորը ներկայացնում որպես ազգային ինքնությանը սպառնացող հիբրիդային պատերազմի մաս:

Վախի հրահրում և ժողովրդագրական «փոխարինման» նարատիվներ

Մշտադիտարկման ընթացքում բացահայտված ամենաագրեսիվ մանիպուլյատիվ հնարքներից է վախի հրահրումը, որտեղ ազգային

[42] Pink Armenia. «Կեղծ էջերի մասին կարևոր զգուշացում»: Pink Armenia, 5 մայիսի 2026 թ.: Հասանելի է՝ https://pinkarmenia.org/news-events/election-related-fake-pages-pinkarmenia/.

[43] ՀԱՅԵԼԻ. ««Հերձված բորոտի» պատճառով մի «հաստավիզ անասուն» հարվածում է 18-ամյա Դավիթին. Կարապետ Պողոսյան»: YouTube, 2 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=EPmbYPJdNDQ

[44] «Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ «Հայաստան» դաշինքը Աշտարակում է»: YouTube, 21 մարտի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=vm6noLl9Dzg.

անվտանգության սպառնալիքները սերտորեն շաղկապվում են գենդերային զգայուն թեմաների հետ: Այս գործընթացում առանցքային է «300,000 թուրքերի/ադրբեջանցիների բնակեցման» և Հայաստանում մզկիթների կառուցման մասին նարատիվը, որը ներկայացվում է որպես իշխանությունների գաղտնի օրակարգ: Ըստ շրջանառվող թեզերի՝ «խաղաղության պայմանագրի» շրջանակում նախատեսվում է ոչ միայն ադրբեջանցիների/թուրքերի զանգվածային ներգաղթ, այլև նրանց համար արտոնյալ պայմաններով մզկիթների կառուցում և մահմեդականության անարգել տարածում: Այս նարատիվը կառուցված է համաշխարհային հակագենդերային և աջ-պոպուլիստական շարժումներին բնորոշ «Մեծ փոխարինման» (Great Replacement) տեսության տրամաբանությամբ[45], որտեղ ներքին «լիբերալ» ուժերը մեղադրվում են սեփական ազգի էթնիկ և կրոնական դիմագիծը կանխամտածված փոփոխելու համար:

Այս նարատիվը Հայաստանում ստանում է սպեցիֆիկ գենդերային երանգավորում վերարտադրողական իրավունքների շահարկման միջոցով: Աբորտը պարբերաբար որակվում է որպես «սպիտակ ցեղասպանություն» կամ «ազգի բնաջնջում», ինչը ստեղծում է այն պատկերը, թե հայ կանայք, օգտվելով իրենց վերարտադրողական իրավունքներից, «տեղ են բացում» եկվոր թուրքերի համար:

Վախի մթնոլորտն էլ ավելի է սրվում բացահայտ սեքսիստական և բռնության կոչեր պարունակող հայտարարություններով, թե իբր այդ 300,000 թուրքերը գալու են «երեխաներին բռնաբարելու և սպանելու»: Նման նարատիվներ հանդիպում են նաև եվրոպական շատ երկրներում (օրինակ՝ Հունգարիայում[46] կամ Լեհաստանում[47]), որտեղ գենդերային հավասարությունը և ԼԳԲՏՔ+ իրավունքները ներկայացվում են որպես «փափուկ ուժ», որը թուլացնում է ազգի դիմադրողականությունը՝ նրան խոցելի դարձնելով «օտարների» ներխուժման առջև:

Ինստիտուցիոնալ մակարդակում այս վախերը լեգիտիմացվում են քաղաքական գործիչների ելույթների միջոցով, որոնք պնդում են, թե միջազգային կազմակերպությունները Հայաստան են մտել ոչ թե բարեփոխումների, այլ հենց այս «ցեղասպանական» ծրագիրն իրականացնելու համար: Մեդիա դաշտում սա վերածվում է հիբրիդային

[45] Svatoňová, Eva, և Nicole Doerr. «How Anti-Gender and Gendered Imagery Translate the Great Replacement Conspiracy Theory in Online Far-Right Platforms»: European Journal of Politics and Gender, h. 7, № 1, 2024, էջ 83–101: Հասանելի է՝ https://doi.org/10.1332/25151088Y2023D000000006.

[46] Perintfalvi, Rita. «Anti-genderism and Neo-homophobic Discourses on the Horizons of Right-wing Populism and Christian Religious Fundamentalism: Warning Signals from Hungary»: Journal of the European Society of Women in Theological Research, h. 31, 2023, էջ 11–28: Հասանելի է՝ https://doi.org/10.2143/ESWTR.31.0.3292277.

[47] Löwdin, Martin. The Puzzling Resonance of Political Homophobia: A Case Study Exploring the Relationship Between Framing and Institutions Involved in the Elite-Driven Anti-LGBTQ Campaign in Today's Poland: Դիսերտացիա, 2021: Հասանելի է՝ https://urn.kb.se/resolve?urn=urn:nbn:se:uu:diva-444372.

պատերազմի գործիքի, որտեղ կին քաղաքական գործիչները թիրախավորվում են որպես այս «հայրենադավ» գործընթացների սպասարկողներ:

Վախի հրահրումը՝ հիմնված էթնիկ և կրոնական տագնապների վրա, Հայաստանում հաջողությամբ շաղկապվում է հակագենդերային օրակարգի հետ՝ ստեղծելով մի միջավայր, որտեղ ցանկացած առաջադիմական բարեփոխում ընկալվում է որպես ազգային գոյությանը սպառնացող անմիջական վտանգ:

Վերարտադրողական իրավունքներ և «Պրո-լայֆ» դիսկուրս

Մշտադիտարկվող ժամանակահատվածում վերարտադրողական իրավունքների շուրջ ծավալված «Պրո-լայֆ»[48] դիսկուրսը Հայաստանում կրում է ամերիկյան ծայրահեղ պահպանողական (Alt-right) շարժումների և հակաաբորտային նարատիվների զգալի ազդեցությունը՝ նախորդ շրջանի ռուսական ազդեցության գերակայության համեմատ: Այս ուղղությունը ներկայացվում է որպես պայքար պետության կողմից վերահսկվող մարմնի գաղափարի դեմ՝ աբորտի շուրջն առաջացնելով էմոցիոնալ ուժեղ ճնշում:

Հակաաբորտային օրակարգն ակտիվորեն առաջ է մղվում տարբեր կրոնական կազմակերպությունների և տեղական ՀԿ-ների (օրինակ՝ «Աշխարհիկ մարդկանց հոգևոր ակումբ» ՀԿ[49], «301 Առաջնորդների զարգացման միավորում» ՀԿ[50]) կողմից, որոնք օգտագործում են ամերիկյան շարժումներից փոխառված թեզերն ու մեթոդաբանությունը: Այս գործընթացում առանցքային դեր ունեն տրանսնացիոնալ կապերը, որտեղ տեղական դիսկուրսը կրկնօրինակում է ԱՄՆ հարթակների բովանդակությունը:

Վերարտադրողական իրավունքների շուրջ ծավալված պայքարը Հայաստանում թևակոխել է ինստիտուցիոնալացման նոր փուլ, ինչի վկայությունն է ամերիկյան ծայրահեղ պահպանողական շրջանակների հետ փոխկապակցված «Պրո Հայ» (ProHaye) հիմնադրամի ձևավորումը[51]: Այս կառույցը, որի հետևում կանգնած են ԱՄՆ-ից Հայաստան տեղափոխված ակտիվիստներ (մասնավորապես՝ Ջոել Թենին[52]), որպես իր հիմնական առաքելություն հռչակել է հանրապետության մեծ քաղաքներում «հակաաբորտային խորհրդատվության» մատուցումը:

Հատկանշական է այս խմբերի կողմից կիրառվող «ասոցիատիվ լեգիտիմացման» մանիպուլյատիվ հնարքը: Նրանք հետևողականորեն փորձում են իրենց գործունեությունը շաղկապել իշխող քաղաքական ուժի հետ՝ սոցիալական հարթակներում հրապարակելով լուսանկարներ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչների հետ: Սա նպատակ ունի հանրության

[48] Munson, Ziad W. The Making of Pro-life Activists: How Social Movement Mobilization Works: Chicago: University of Chicago Press, 2008: Հասանելի է՝ https://press.uchicago.edu/ucp/books/book/chicago/M/bo5186375.html.

[49] «Աշխարհիկ մարդկանց հոգևոր ակումբ» ՀԿ. Facebook էջ: Հասանելի է՝ https://www.facebook.com/profile.php?id=61588586168574.

[50] «301 Առաջնորդների զարգացման միավորում» ՀԿ. Facebook էջ: Հասանելի է՝ https://www.facebook.com/profile.php?id=61574695784621.

[51] Tenney, Joel. «To my dear friends, and followers! A new chapter has opened up for our family…»: Facebook, 15 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.facebook.com/photo/?fbid=26221281190900477&set=a.307639009358050.

[52] Tenney, Joel. Facebook էջ: Հասանելի է՝ https://www.facebook.com/jctenney1996.

շրջանում ստեղծելու պատկերացում, թե իբր իշխանություններն աջակցում են իրենց օրակարգին, թեև նման համագործակցության վերաբերյալ որևէ պաշտոնական հաստատում առկա չէ: [53]

Այս նարատիվը սերտորեն շաղկապվում է այնպիսի հարթակների և միջոցառումների հետ, ինչպիսին է «Աղոթքի նախաճաշը», որը ծառայում է որպես ամերիկացի պահպանողական ակտիվիստների և տեղական կրոնական ու քաղաքական խմբերի համագործակցության միջավայր: Այս համատեքստում վերարտադրողականության հարցը դիտարկվում է ոչ թե իրավունքների, այլ «առաքինի և պատասխանատու կյանքի» տեսանկյունից, ինչը բնորոշ է ամերիկյան ավետարանչական էթիկային: Հայաստանյայց Ավետարանական եկեղեցու կողմից կազմակերպվող կանանց համագումարները, օրինակ՝ «Եվայի նախանձը» թեմայով,[54] կանանց կոչ են անում դիմակայելու «աշխարհիկ մարտահրավերներին»:

«Պրո-լայֆ» դիսկուրսի հիմնական մանիպուլյատիվ գործիքներից է «թաքնված թվերի» նարատիվը, որի միջոցով փորձ է արվում ստեղծելու ժողովրդագրական աղետի և «ազգի բնաջնջման» զգացողություն: Թեև պաշտոնական վիճակագրությամբ 2024 թվականին Հայաստանում գրանցվել է 9,062 աբորտ, այս դիսկուրսը պնդում է, որ իրական թիվը 3-4 անգամ ավելի բարձր է և հասնում է 27,000-ից 36,000-ի:[55]

Այս պնդումների համար որպես «գիտական» հիմնավորում վկայակոչվում է Նյու Յորքում տեղակայված Գուտմախերի ինստիտուտի 2020 թվականի հետազոտությունը[56]: Սակայն այստեղ առկա է նպատակաուղղված մանիպուլյացիա. ինստիտուտի տվյալները ոչ թե իրականում հաշվարկված դեպքեր են, այլ վիճակագրական մոդելավորված գնահատականներ, որոնք ունեն «անորոշության լայն միջակայք» (օրինակ՝ 1,000 կնոջ հաշվով ցուցանիշը կարող է տատանվել 33.6-ից մինչև 63.7-ի միջակայքում):[57] Հակաաբորտային

[53] Pursley, Jacob. «Congratulations to re-elected Prime Minister Nikol Pashinyan. God had mercy and grace on Armenia again…»: Facebook, 8 հունիսի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.facebook.com/share/p/1HjXQku6Lz/.

[54] Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի. «Աստծո խոսքը՝ աշխարհի մարտահրավերներին դիմակայելու միջոց. ՀԱԵ կանանց մեկօրյա համագումարներն ավարտվեցին»: 1 մայիսի 2026 թ.: Հասանելի է՝ https://www.eca.am/post/3049.

[55] «Կյանքի Իրավունք» հիմնադրամ. «ՀՀ-ում աբորտների թաքնված թվերը. պաշտոնական ցուցանիշը՝ 3-4 անգամ ավելի ցածր, քան իրականը»: 3 մայիսի 2026 թ.: Հասանելի է՝ https://pro-life.am/%d5%b0%d5%b0-%d5%b8%d6%82%d5%b4-%d5%a1%d5%a2%d5%b8%d6%80%d5%bf%d5%b6%d5%a5%d6%80%d5%ab-%d5%a9%d5%a1%d6%84%d5%b6%d5%be%d5%a1%d5%ae-%d5%a9%d5%be%d5%a5%d6%80%d5%a8-%d5%ba%d5%a1%d5%b7%d5%bf%d5%b8%d5%b6/.

[56] Bearak, Jonathan, Anna Popinchalk, Bela Ganatra, Ann-Beth Moller, Özge Tunçalp, Cynthia Beavin, Lorraine Kwok և Leontine Alkema. «Unintended Pregnancy and Abortion by Income, Region, and the Legal Status of Abortion: Estimates from a Comprehensive Model for 1990–2019»: The Lancet Global Health, h. 8, № 9, 2020, էջ e1152–e1161: Հասանելի է՝ https://doi.org/10.1016/S2214-109X(20)30315-6.

[57] Bearak, Jonathan, Anna Popinchalk, Bela Ganatra, Ann-Beth Moller, Özge Tunçalp, Cynthia Beavin, Lorraine Kwok

ջատագովները վերցնում են այդ մոդելավորման հնարավոր ամենաբարձր շեմը և այն հանրությանը մատուցում որպես անհերքելի ճշմարտություն:

Մանիպուլյացիան է՛լ ավելի է խորանում, երբ այդ ենթադրյալ «թաքնված թվերը» ուղղակիորեն համադրվում են ծնունդների պատմական նվազագույնի հետ: Սա թույլ է տալիս շրջանառել այն թեզը, թե «աբորտների թիվը գերազանցում է ծնունդների քանակը», ինչն օգտագործվում է որպես ազգային անվտանգությանը սպառնացող «սպիտակ ցեղասպանության» գլխավոր ապացույց:

Ամերիկյան փորձին հղում անելով՝ ջատագովները մեջբերում են Dobbs v. Jackson դատական որոշումը[58] և ԱՄՆ 14 նահանգներում աբորտի սահմանափակման հետևանքով ծնելիության 1.5–2.3% աճի տվյալները: Ըստ շրջանառվող թեզերի՝ Հայաստանում նման սահմանափակումների ազդեցությունը շատ ավելի մեծ կլինի (12-21% աճ), քանի որ այստեղ բացակայում են շրջանցման այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են հեռաբժշկությունը կամ այլ տարածքներ մեկնելը: Իրավական հարթությունում «Պրո-լայֆ» օրակարգն առաջ մղող խմբերը պահանջում են Սահմանադրության 24-րդ հոդվածի («յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք») տարածումը նաև չծնված երեխայի վրա: Նրանք պնդում են, որ անհրաժեշտ է չծնվածին ճանաչել որպես իրավական սուբյեկտ, ինչը թույլ կտա աբորտը դիտարկել ոչ թե որպես բժշկական միջամտություն, այլ որպես սահմանադրական իրավունքի խախտում:[59]

Համաշխարհային փորձի համատեքստում նշվում է, որ միայն ֆինանսական խթանները, ինչպես Հունգարիայում (CSOK), Ռուսաստանում (Մայրական կապիտալ) կամ Լեհաստանում (Family 500+), բավարար չեն ծնելիությունը վերականգնելու համար: Հետևաբար, ըստ այս դիսկուրսի, անհրաժեշտ է համադրել տնտեսական աջակցությունը իրավական խիստ պաշտպանության և կրոնական-ավանդական արժեքների ամրապնդման հետ:

Աբորտը ներկայացվում է որպես բարոյական թերություն և մարդկային կյանքի կործանում, որը հանգեցնում է հասարակության բարոյական դեգրադացիայի և ամուսնալուծությունների աճի:[60] Այսպիսով՝ վերարտադրողական

և Leontine Alkema. Global Estimation of Unintended Pregnancy and Abortion Using a Bayesian Hierarchical Random Walk Model: arXiv, 2020: Հասանելի է՝ https://arxiv.org/pdf/2007.09246.

[58] Միացյալ Նահանգների Գերագույն դատարան. Dobbs, State Health Officer of the Mississippi Department of Health, et al. v. Jackson Women's Health Organization et al., No. 19–1392: Որոշում՝ 24 հունիսի 2022 թ.: Հասանելի է՝ https://www.supremecourt.gov/opinions/21pdf/19-1392_6j37.pdf.

[59] «Կյանքի Իրավունք» հիմնադրամ. «Իրականում ի՞նչ է ասում Հայաստանի օրենսդրությունը աբորտի մասին»: 27 ապրիլի 2026 թ.: Հասանելի է՝ https://pro-life.am/իրականում-ի՞նչ-է-ասում-հայաստանի-օրեն/.

[60] «Կյանքի Իրավունք» հիմնադրամ. «Աբորտը՝ էթիկայի, կրոնի և բժշկության խոշորացույցի ներքո»: 25 մարտի 2026 թ.: Հասանելի է՝ https://pro-life.am/աբորտը՝-էթիկայի-կրոնի-և-բժշկության-խո%2F.

իրավունքների շուրջ պայքարը վերածվում է գլոբալ հակագենդերային ճակատի մասի, որտեղ ամերիկյան պահպանողական մոդելները դառնում են հիմնական ուղենիշերը հայկական համատեքստում:

Քանակական տվյալների ամփոփում

Մշտադիտարկման ամբողջ ժամանակահատվածում՝ նախընտրական փուլում (մարտ-հունիս), հավաքված տվյալները փաստում են հակագենդերային նարատիվների և քաղաքական կնատյացության դրսևորումների աննախադեպ ինտենսիվության մասին: Եթե միայն մարտին նույնականացվել էր շուրջ 30 առնչվող հրապարակում, ապա ապրիլ-հունիս ժամանակահատվածում այդ թիվը բազմապատկվել է՝ հասնելով 191 մեդիա միավորների: Մշտադիտարկվել է ավելի քան 300 ժամ տևողությամբ վիդեո բովանդակություն, որի հիմնական մասը տարբեր հարցազրույցներ, ճեպազրույցներ են, այդ թվում՝ «Հայելի» ակումբի ասուլիսները և քաղաքական ուժերի ուղիղ եթերները:

Վերլուծված վիդեո նյութերի ընթացքում արձանագրվել է գենդերով պայմանավորված ատելության խոսքի, անձնական վիրավորանքի և դեհումանիզացիայի ավելի քան 150 առանձնակի դեպք, ինչը նշանակում է, որ հետազոտվող ժամանակահատվածում գրեթե ամեն օր շրջանառվել է կին գործիչներին թիրախավորող և պիտակավորող առնվազն մեկ հրապարակում, ընդ որում՝ չեն դիտարկվել բոլոր կին քաղաքական գործիչների սոցիալական էջերը:

Ակտիվության բաշխվածությունը ցույց է տալիս հակագենդերային օրակարգի համակարգված տարածումը տարբեր լսարանների միջև, որտեղ YouTube հարթակը եղել է հիմնական միջավայրը մանիպուլյատիվ թեզերի գեներացման համար: Telegram ալիքներն օգտագործվել են որպես արագ արձագանքման և «փակ խմբերի» ստեղծման գործիք:

Նախընտրական շրջանի ամենամտահոգիչ քանակական ցուցանիշը կազմակերպված «ֆեյքային» գրոհներն են, որոնք հատկապես սրվեցին Գոհար Ղումաշյանի և Արուսյակ Ջուլհակյանի շուրջ ծավալված քննարկումների ժամանակ: Մեկ սկանդալային հրապարակման տակ արձանագրվել են հարյուրավոր մեկնաբանություններ, որոնց կեսը տարածվել է կասկածելի կամ ոչ իրական օգտատերերի կողմից, ինչը նպատակ է ունեցել ստեղծելու «արհեստական աղմուկ» և լռեցնելու իրական արձագանքը:

Եզրակացություններ և առաջարկներ

2026 թվականի մարտից հունիսի 7-ն ընկած ժամանակահատվածի համապարփակ մշտադիտարկումը և դիսկուրս-վերլուծությունը թույլ են տալիս արձանագրել, որ քաղաքական կնատյացությունը Հայաստանում երբեմն կազմակերպված և ռազմավարական քաղաքական տեխնոլոգիա է, որն ուղղված է կանանց քաղաքական սուբյեկտայնության չեզոքացմանը և նրանց որոշումների կայացման գործընթացից դուրս մղելուն: Ուսումնասիրությունը փաստում է, որ կին գործիչների թիրախավորումն իրականացվում է ոչ թե նրանց քաղաքական գաղափարների կամ ծրագրերի բովանդակային քննադատության, այլ բացառապես սեռականության, արտաքին տվյալների և մայրական պարտականությունների շահարկման միջոցով: Այս գործընթացում առանցքային դեր ունի «գենդերային պատժի» մեխանիզմը, որտեղ քաղաքականապես ակտիվ կինը պիտակավորվում է որպես «ոչ առաքինի» կամ «վատ մայր», ինչը նպատակ ունի նրան հանրային ոլորտից մղելու դեպի մասնավոր-կենցաղային տիրույթ՝ վերահաստատելով պատրիարխալ սահմանները:

Մշտադիտարկումը բացահայտել է, որ հայաստանյան հակագենդերային դիսկուրսը սերտորեն շաղկապված է տրանսնացիոնալ ազդեցությունների հետ՝ գրեթե նույնությամբ կրկնօրինակելով ամերիկյան ծայրահեղ պահպանողական (Alt-right) և ռուսական «ավանդական արժեքների» նարատիվները: Հատկապես մտահոգիչ է վերարտադրողական իրավունքների շուրջ ծավալված «Պրո-լայֆ» դիսկուրսի ինստիտուցիոնալացումը, որտեղ աբորտների վիճակագրության բացահայտ մանիպուլյացիան (պաշտոնական 9,062-ն ընդդեմ ենթադրյալ 36,000-ի) օգտագործվում է ժողովրդագրական աղետի զգացողություն ստեղծելու և «սպիտակ ցեղասպանության» թեզն ամրապնդելու համար: Այս նարատիվը հաջողությամբ շաղկապվում է էթնիկ վախերի հրահրման հետ, մասնավորապես՝ «300,000 թուրքերի» բնակեցման և մզկիթների կառուցման թեզերի միջոցով, որտեղ կին գործիչները ներկայացվում են որպես ազգային ինքնությանը սպառնացող «հայրենադավ» ծրագրերի սպասարկողներ:

Մեդիա էկոհամակարգում արձանագրվել է դիսկուրսիվ դեհումանիզացիայի կայուն պատեռն, որտեղ սատիրիկ հարթակները աբսուրդային հորինվածքների միջոցով նսեմացնում են կին գործիչների մասնագիտական սուբյեկտայնությունը: Քանակական տվյալները հաստատում են, որ սոցիալական ցանցերում իրականացվող հարձակումների զգալի մասն ունի համակարգված «ֆեյքային» բնույթ, ինչը նպատակ ունի լռեցնելու իրական իրավապաշտպան արձագանքը և ձևավորելու հանրային բացասական կոնսենսուսի պատրանք:

Ի վերջո, մշտադիտարկվող փուլում արձանագրվել է ինստիտուցիոնալ էթիկայի լուրջ ճգնաժամ, երբ բարձրաստիճան պաշտոնյաների և

պատգամավորների հանրային խոսքը խախտում է բարոյական նորմերը՝ սեքսուալիզացնելով կնոջ կենսաբանական ֆունկցիաները, ինչը ստեղծում է վտանգավոր նախադեպեր:

Հիմնվելով մշտադիտարկման ընթացքում վերհանված մարտահրավերների և միտումների վրա՝ առաջարկվում է ձեռնարկել հետևյալ քայլերը.

- Անհրաժեշտ է Ազգային ժողովում նախաձեռնել էթիկայի ժամանակավոր հանձնաժողովի ստեղծում, որը կքննի պատգամավորների հնչեցրած սեքսիստական, վիրավորական և անձի արժանապատվությունը նսեմացնող հայտարարությունները: Սա թույլ կտա ապահովել պատշաճ քաղաքական և իրավական արձագանք՝ կանխելով կին գործիչների թիրախավորումը:
- Ուժեղացնել վերահսկողությունը կանանց նկատմամբ հոգեբանական և հուզական բռնության ձևերի նկատմամբ, որոնք դրսևորվում են մեդիա-մանիպուլյացիայի, սպառնալիքի կամ հարկադրանքի միջոցով: Պետական մարմինները պետք է հստակ տարանջատեն քաղաքական քննադատությունը անձնական տիրույթ ներխուժող խտրական վարքագծից:
- Ժողովրդագրական ճգնաժամին հակազդելու համար կառավարությունը պետք է առաջնորդվի ճշգրիտ վիճակագրական տվյալներով, ինչը պահանջում է թարմացված ժողովրդագրության և առողջության հարցերով հետազոտության անհապաղ իրականացում: Սա թույլ կտա չեզոքացնել «թաքնված թվերի» շուրջ մանիպուլյացիաները և մշակել իրականությանը համապատասխանող ռազմավարություններ:
- Աջակցել անկախ փաստահավաք հարթակներին՝ հակազդելու կեղծ կամ սատիրիկ հարթակների կողմից տարածվող ապատեղեկատվությանը: Խրախուսել լրագրողական էթիկայի խստիվ պահպանումը, հատկապես այն նարատիվների պարագայում, որոնք հրահրում են էթնիկ և կրոնական վախեր:
- Մշակել մեխանիզմներ՝ պաշտպանելու կին իրավապաշտպաններին և ՔՀԿ ներկայացուցիչներին թիրախային արշավներից և կազմակերպված «ֆեյքային» գրոհներից: Կանանց կազմակերպությունների ռազմավարական հաղորդակցության հզորացումը կօգնի «երկակի ստանդարտների» մեղադրանքներին համակարգված հակազդելու համար:
- Իրականացնել լայնածավալ իրազեկման ծրագրեր՝ ուղղված սեռական գրագիտության բարձրացմանը և գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը: Վերարտադրողական իրավունքների քննարկումը պետք է տեղափոխել պատասխանատու ծնողավարության և առաքինության էթիկայի հարթություն՝ զերծ պահելով այն ծայրահեղ պահպանողական շարժումների էմոցիոնալ ճնշումներից: